

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀՍՄԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
19	<p>Գրասեղան, չափսերը՝ 1200 x 600 x 760 մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և զգրոցի համար պետք է օգտագործվի 18 մմ հաստության լամինացված E0 դասի ՓՏՍ :</p> <p>Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն համապատասխան հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք): Գրասեղանի առջև փակվում է 18 մմ հաստությամբ նույն E0 դասի ՓՏՍ դիմապատը՝ որի չափսերն են՝ 1164 x 450 x 600 մմ, և որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար ու ամրանում է աշխատանքային հարթության եզրին(տակից) և կողապատերի(ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570 մմ:</p> <p>Կողապատերի (ոտքերի) եզրերը պետք է շրջափակվեն համապատասխան հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է ամրացվի ոտիկներ՝ 5-6 մմ բարձրությամբ: Գրասեղանի աշխատանքային հարթության վերևի աջ կամ ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցք՝ տեղակայված փակվող խցաններով՝ ըստ գծագրի: Գրասեղանը պետք է ունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող զգրոց, չափսերը՝ 410x460x590 մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 140,140,270 մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ, որակյալ սահնակներով (սայասկա): Գրասեղանը, կողապատերը (ոտքերը),</p>

դիմապատր, գզրոցը և պոլիմերային եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ բնափայտի գույնի, բաց երանգի: Դարակները պետք է ունենան օվալաձև մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100 մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Աշխատանքները պետք է կատարվեն Էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի ողորկ, առանց ծլեպների, անհրաժեշտության դեպքում լաքապատված (Էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով): Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում մատակարարը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի Եսթետիկությունը, մասնավորապես՝ գունային լուծույթները պետք է կատարվի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի Էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան ըստ նպատակային նշանակության օգտագործման համար նախատեսված չափսային պահանջներին, ցանկալի է նաև ոտքերը լինեն կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ և առաջին իսկ պահանջի դեպքում՝ պետք է ներկայացվի ապրանքի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման և/կամ փոխարինման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման համար հիմք հանդիսացող նորմատիվա-իրավական փաստաթուղթը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և դրանց անվտանգության և Էկոլոգիապես մաքուր հումք լինելու մասին գրառումները և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր Եսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՍՍԱ-ԷԱՃԱՊՁԲ-2024/4 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
19	